

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ԵԹՎՊԻՒՒԳՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

«29» օգոստոսի 2014թ. նիստում

ՌԵԿՏՈՐ  ՍՈՒՐԱԴՅԱՆ



ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ

1. Ներածություն

Հայաստանի հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության համակարգը զարգացման աննախընթաց փուլ է մտել: Այն բնութագրվում է մի շարք հանգամանքներով, որոնք ուղղված են բարձրագույն մասնագիտական կրթության բոլորնյան սկզբունքների տարածմանը: Այդ սկզբունքներից մեկը բարձրագույն կրթության որակի ապահովման և դրա հետագա առաջընթացի համար երաշխիքներ ապահովող մեխանիզմների ու ընթացակարգերի մշակումն է:

ՀՀ-ում մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը ԿԳ նախարարության գործընկերությամբ նախաձեռնել է բուհերում կրթության որակի ներքին ապահովման համակարգի ստեղծումը և գործարկումը:

Ինստիտուտի գոյության ընթացքում գործել է որակի համակարգ, որի արդյունքները համահունչ են եղել ժամանակի պահանջներին, սակայն որակի քաղաքականությունը խարսխված է եղել վարչաիրամայական մեթոդների վրա՝ տեսչական ստուգումներ, կազմակերպական որոշումներ և այլն. որակի ապահովման և հետադարձ կապի մեխանիզմների գործադրման խնդիր չի դրվել: Հիմնականում շեշտվել է բուն ուսումնական գործընթացի իրականացումը, այլ ոչ թե դրա արդյունավետության ուսումնասիրումը: Այսօրվա կրթական չափանիշներից և սկզբունքներից ելնելով՝ ինստիտուտի ժառանգության դրական մի շարք հանգամանքների մեջ խիստ կարևորվում է կրթություն-կարիերա կապը, որի սերտ լինելու շնորհիվ մասնագիտական կադրերի պատրաստման մակարդակը զգալիորեն բարձր է արվեստի և մշակույթի գործիչների գնահատմամբ: Դա պայմանավորված է նրանով, որ խաղարկային արվեստների ոլորտի համար մասնագիտական կադրեր պատրաստող ինստիտուտը ավանդաբար տասնամյակներ շարունակ դասախոսական աշխատանքի է հրավիրել այդ նույն ոլորտում լայնորեն հայտնի արվեստագետներին, մշակույթի

գործիչներին, որոնք, կամրջելով կրթությունն ու կարիերան, արվեստի բուհի ուսանողներին են բերել ոլորտի մշակութային պրակտիցիզմն ու աշխատաշուկայի պահանջները և իրենց արվեստանոցներում սաներին պատրաստել են՝ արդեն ելնելով աշխատաշուկայի պահանջներից:

Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտը հիմնադրվել է 1944 թվականին՝ երեք բաժիններով՝ դերասանական, ռեժիսորական, թատերագիտական: 1952 թվականին կառավարության որոշմամբ թատերական և գեղարվեստական ինստիտուտները միավորվել են «Գեղարվեստա-թատերական ինստիտուտ» անվան տակ: 1994 թվականին ինստիտուտը կրկին տրոհվում է երկու անկախ բուհերի՝ «Գեղարվեստի ակադեմիայի» և «Թատերարվեստի պետական ինստիտուտի»: 1999 թվականին բուհն ընդլայնում է իր մասնագիտությունների ցանկը և վերանվանվում «Թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ»: ԵԹԿՊԻ կառուցվածքում գործում են նաև երեք մասնաճյուղեր՝ Գյումրիում, Վանաձորում և Գորիսում, որտեղ մասնագետների պատրաստումն ընթանում է նույն մեթոդաբանությամբ:

2011/2012 ուսումնական տարում բուհում ստեղծվել են երեք ֆակուլտետներ՝ Թատրոնի, Կինոյի, հեռուստատեսության և անիմացիայի. Արվեստի պատմության, տեսության կառավարման: Ուսուցումն ընթանում է բակալավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա եռաստիճան կրթական ծրագրերով, առկա և հեռակա: 1961 թվականից բուհը ընդունում է սփյուռքահայ և արտասահմանցի ուսանողներ: Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտը հանրապետության խաղարկային արվեստների ոլորտի համար բարձրագույն մասնագիտական կադրեր է պատրաստում 10 մասնագիտությունների և բազմաթիվ մասնագիտացումների գծով: Ուսումնական մասնագիտական գործընթացները կազմակերպվում են համապատասխան արվեստանոցներում, դահլիճներում, կինո և տեսասրահներում, տաղավարներում, ուսումնական թատրոնում, 225 տեղանոց դահլիճում: Ինստիտուտն ունի մասնագիտական հարուստ գրադարան շուրջ 40.000 կտոր գրականությամբ, ֆիլմա և տեսադարաններ, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ:

Հրատարակվում է ամենամյա «Հանդես» ժողովածուն, որտեղ տպագրվում են բուհի դասախոսների և ուսանողների գիտական, մեթոդական աշխատությունները: Բուհն ունի 1000-ից ավել ուսանողներ և 200 դասախոսներ, որոնց ընտրանին ամեն տարի մասնակցում է հանրապետական և միջազգային ստեղծագործական մրցույթների, փառատոների և դառնում հաղթողներ, դափնեկիրներ, գլխավոր մրցանակակիրներ:

Բուհում դասավանդում են հանրապետության անվանի մշակույթի գործիչներ՝ ժողովրդական արտիստներ, միջազգային փառատոների հաղթողներ, պետական մրցանակների դափնեկիրներ. շուրջ 40 պրոֆեսորներ, 40 դոցենտներ, 120 դասախոսներ:

Բուհի 10 մասնագիտություններից մի քանիսը ներդրվել են վերջին երկու տարում: Բուհը խնդիր չունի ներդրված մասնագիտությունների գծով կատարվող ընդունելության քանակի ծավալման: Նրա աճը կարող է իրականացվել միայն նոր մասնագիտությունների ներդրման միջոցով: Ուսումնասիրվում են աշխատաշուկայի կարիքները խաղարկային արվեստների ոլորտի ժամանակակից զարգացումների ուղղությամբ և պլանավորվում է առաջիկա տարիներին ավելացնել մասնագիտությունների թիվը:

Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի որակի ներքին ապահովման կենտրոնը ստեղծվել է 2011թ նոյեմբերին: ԵԹԿՊԻ-ում որակի ներքին ապահովման կենտրոնը միաժամանակ և՛ ձևավորվում, և՛ կազմակերպում է իր աշխատանքները ինստիտուտի ստորաբաժանումների հետ:

Մույն հայեցակարգը ՈՆԱԿ-ի և ընդհանրապես ինստիտուտի կրթության որակի ապահովման ոլորտում կարևոր փաստաթուղթ է: Այն նախատեսում է ինստիտուտի ռազմավարական ծրագրի իրականացման որակի ապահովմամբ հասնել շահակիցների՝ ուսումնառողների, նրանց ծնողների, գործատուների, պետության և հասարակության բավարարվածության աստիճանի բարձրացմանը:

ԵԹԿՊԻ բարձրագույն մասնագիտական կրթության որակի ներքին ապահովման հայեցակարգի ստեղծումը թույլ է տալիս սահմանել որակի ապահովման քաղաքականությունը, նպատակները: Այն կնպաստի բուհի որակի ներքին ապահովման

համակարգի ձևավորմանը և կդառնա նրա բոլոր գործընթացների մշտական բարելավման հիմքը:

Կրթության որակի ներքին ապահովման համակարգը կներառի ԵԹԿՊԻ-ի նորմատիվ-մեթոդական փաստաթղթերի փաթեթը, որը կսահմանի որակի մշակույթի ձևավորման հիմնական ուղղությունները, տեխնոլոգիաները, մեթոդները և գործելակերպը:

## 2. Ինստիտուտի կրթության որակի ներքին ապահովման համակարգի առաքելությունը, տեսլականը, նպատակները և խնդիրները

### *Առաքելություն:*

*ԵԹԿՊԻ-ի որակի ներքին ապահովման համակարգի առաքելությունը խաղարկային արվեստների ոլորտի համար մասնագիտական կադրերի պատրաստման գործընթացում որակի մշակույթի ձևավորումն է:*

### *Տեսլական:*

*ԵԹԿՊԻ որակի ներքին ապահովման համակարգը՝ հենվելով արվեստի մեջ նորարարական գործունեության իրականացման վրա և ապահովելով կրթական կենտրոնի իր դերը, պետք է պահպանի ու աստիճանաբար ամրապնդի բարձր որակավորում ունեցող, մրցունակ, բանիմաց, հոգևոր արժեքներով օժտված մասնագետներ պատրաստողի առաջատար իր տեղը բուհերի շարքում:*

*Կրթության որակի ներքին ապահովման համակարգը երաշխավորում է որակի ապահովման քաղաքականությունը, նպատակները, դրանց հասնելու ուղիները և հիմք է հանդիսանում բուհի բոլոր գործընթացների մշտական բարելավման համար:*

Ինստիտուտի որակի ներքին ապահովման համակարգի/ՈՆԱՀ/ հիմնական նպատակներն են կրթության ազգային և եվրոպական չափորոշիչների իրականացման հավաստումը, շահակիցների առջև հաստատության հաշվետվողականության

ապահովումը, ուսուցման որակի բարելավումը և որակի մշակույթի ստեղծումն ու զարգացումը:

ԵԹԿՊԻ քաղաքականությունը կրթության որակի բնագավառում ուղղված է իր առաքելության իրականացմանը: Ինստիտուտը կրթության որակի ապահովումը համարում է իր գործունեության գերակա խնդիրը և զարգացնում է որակի կարևորության ճանաչման մշակույթ: Կրթության որակի ապահովման գործում ինստիտուտի որակի ներքին ապահովման համակարգի խնդիրներն են՝

- բարձրագույն կրթության ոլորտում իր պատրաստած մասնագիտությունների գծով շուկայում առաջատար դիրքի պահպանումը,
- մատուցվող կրթական ծառայությունների որակի մշտական բարելավումը,
- շրջանավարտների մրցունակության և պահանջարկվածության մակարդակի մշտական ապահովումը,
- աշխատակիցների որակական աճի, աշխատանքի և նրա պայմանների ապահովումը,
- մասնաճյուղերի և ինստիտուտի սոցիալական գործընկերների՝ մրցակցող այլ բուհերի, կազմակերպությունների, պետական մարմինների հետ ակտիվ համագործակցությունը,
- նյութատեխնիկական և տեղեկատվական հիմքերի արդիականացումը,
- կրթության որակի համակարգի կառավարումը՝ պլանավորում - իրականացում - ստուգում - բարելավում շրջափուլով,
- կրթության որակի գնահատման ընթացակարգում գործատուների, արվեստի մասնագիտական միավորումների, անկախ փորձագիտական միավորումների ներկայացուցիչներին և նրանց առաջադրած պահանջների ընդգրկումն ու ամրապնդումը,
- ինստիտուտի ստորաբաժանումների ղեկավարների և դասախոսական կազմի կողմից կրթության որակի ապահովման ընդունումը, որպես անձնական պատասխանատվություն:

### 3. ԿՈՆԱ ներկայիս համակարգը

ՈՆԱ համակարգը ներկայացված է որակի կենտրոնով, որի զարգացման ուղղությունները նշված են “ԵԹԿՊԻ ռազմավարական պլան 2012-2017 թթ” փաստաթղթի “Կրթական գործունեության զարգացում ու կատարելագործում” նպատակի “Եվրոպական չափորոշիչների պահանջներին համապատասխան որակի ներքին ապահովման համակարգ” խնդրում, որի հիման վրա պետք է՝

- 1 . Մշակել ԵԹԿՊԻ՝ որակի ներքին ապահովման համակարգի հայեցակարգ,
- որակի շարունակական բարելավման ռազմավարության համապատասխան ընթացակարգեր,
- սահմանել կառավարման կառույցների ու կառուցվածքային միավորների պարտականություններն ու գործառույթները:

2. Մշակել ԵԹԿՊԻ գործունեության հիմնական ոլորտների ինքնագնահատման չափանիշները՝ համաձայն ՀՀ պետական հավատարմագրման չափորոշիչների:

3. Իրականացնել ԵԹԿՊԻ կրթական գործունեության ինքնագնահատման գործընթաց:

4. Նախապատրաստվել որակի արտաքին գնահատման և հավատարմագրման գործընթացներին:

5. Ստեղծել ուսումնական ծրագրերի պահանջներին համապատասխան ներքին չափանիշներ և ընթացակարգեր:

6. Ստեղծել և հրապարակել ուսումնառության արդյունքներին վերաբերող ընթացակարգերը:

7. Ստեղծել և հրատարակել կրթական ծրագրերի տեղեկագրքեր:

Բուհի որակի ներքին ապահովման համակարգի յուրաքանչյուր ոլորտ պետք է ներկայացված լինի այդ ոլորտին հարիր գործողություններով, դրանց փաստաթղթավորմամբ և գնահատման հետադարձ կապի մեխանիզմներով:

#### 4. Կրթության որակի ներքին ապահովման համակարգի գործառույթներն են՝

Հավաքել համակարգել, ուսումնասիրել և հաշվի առնել շահակիցների (ուսանողներ, ծնողներ, գործատուներ) արձագանքները բուհական գործընթացներում որակի ապահովման վերաբերյալ:

- Փաստաթղթավորել բուհի որակի բարելավմանն ուղղված գործողությունները:
- Տեղեկատվություն ապահովել մասնագիտական կրթության որակի ներքին ապահովման բազմազան կողմերի վերաբերյալ:
- Որակի ապահովման խնդիրների վերաբերյալ պարբերաբար կազմակերպել սեմինարներ, աշխատաժողովներ:
- Պատրաստել որակի ապահովման աշխատանքների տարեկան հաշվետվություն՝ ըստ պետության կողմից սահմանված չափանիշների:

#### 5. ԿՈՆԱ համակարգի կառավարման սկզբունքները

ԵԹԿՊԻ-ի կողմից իր կրթության որակի ներքին համակարգի կառավարումը դիտվում է իբրև բուհի ընդհանուր կառավարման բաղադրամաս և հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

- աշխատակիցների և ղեկավար անձանց ներգրավում որակի խորհրդի, որակի լիազորների կազմի ստեղծում, գործառույթների հստակեցում,
- գործառույթների իրականացման ընթացքում աշխատակիցների և ղեկավար անձանց համագործակցության ապահովում,
- աշխատակիցների պատասխանատվությունների և իրավասությունների սահմանազատում և հստակեցում,
- գործընթացային մոտեցում որակի ապահովմանը /պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում/,
- ղեկավարի առաջնորդություն



- ներքին և արտաքին շահակիցների ներգրավում
- համակարգային մոտեցում
- շարունակական բարելավում

## 6. ԿՈՆԱ համակարգի կադրերի պատրաստման գործընթացը

Կրթության որակի ներքին ապահովման շարունակական գործընթացների մասնակիցների հետ պետք է կազմակերպել կարճաժամկետ դասընթացների շարք, նախ հրավիրված մասնագետների, ապա՝ ինստիտուտում պատրաստած կադրերի օգնությամբ՝ ուսումնասիրելով հետևյալ հարցերը.

1. Ի՞նչ ենք հասկանում՝ ասելով կրթության գործընթացի որակ և արդյունք,
2. Որո՞նք են պետական չափորոշիչների հիմնական պահանջները,
3. Ինչու՞ է մեր ինստիտուտը մշակում և ներդրում որակի համակարգ,
4. Որո՞նք են դրա առավելությունները,
5. Ինչպե՞ս է իրականացվում ինստիտուտի որակի համակարգի մշակումը, ներդրումը, գրանցումը,
6. Որակի համակարգի ներդրումից հետո ի՞նչ փոփոխություններ տեղի կունենան աշխատակցի աշխատանքում և ի՞նչ առավելություն նա կստանա,
7. Ամեն մի աշխատակից պետք է ի վիճակի լինի տեսնել իր անձնական շահը այդ փոփոխությունների արդյունքում: Եթե դա տեղի չունենա, ապա անձնակազմը կընդդիմանա նորամուծություններին:

## 7. ԿՈՆԱ համակարգի ձևավորման փուլերը

Ինստիտուտի կրթության որակի ապահովման ներքին համակարգի ստեղծման և ներդրման գործընթացը պետք է իրականացվի է հետևյալ փուլերով .

- փաստացի իրադրության վերլուծում,
- ինստիտուտի գործընթացների բացահայտում և փաստաթղթավորում,

- գործընթացների և ընթացակարգերի ներդրում պրակտիկայում,
- մշտադիտարկման և վերլուծության մեխանիզմների մշակում և ինքնավերլուծության ներդրում,
- որակի ներքին ապահովման գործընթացների բարելավում,
- կազմակերպական կառուցվածքի փոփոխությունների իրականացում:

8. ԿՈՆԱ համակարգի գործադրման ակնկալվող արդյունքները.

- կկայանա որակի ներքին ապահովման համակարգի կազմակերպական կառուցվածքը,
- հստակ կդառնան որակի ապահովման մեխանիզմները,
- կգործարկվի որակի կառավարման մոդելը,
- աստիճանաբար կձևավորվի որակի մշակույթ,
- կպատրաստվի և կիրատարակվի որակի ներքին ապահովման վերաբերյալ բուհի ձեռնարկը,
- կստեղծվի փաստաթղթավորման կարգավորված համակարգ
- աստիճանաբար սկիզբ կառնի որակի անշեղ բարձրացման գործընթաց ինստիտուտի կրթական բոլոր ոլարտներում:

Որակի ապահովման գործընթացը բաղկացած է միմյանց հետ փոխկապակցված տարատեսակ մեխանիզմներից, որոնք արդյունքում վերածվում են համակարգի: Դրանցից որևէ մեկի գործառույթներում կատարվող փոփոխությունը ներազդում է մյուսների վրա: